ՊԱՇՏՈՆ	Բիզնես վերլուծաբան: Թվային բանկինգ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	Քաղաք Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	13/08/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	13/09/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է բիզնես վերլուծաբանի՝ Թվային բանկինգի թիմին միանալու, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մանրամասն վերլուծել, համադրել և փաստաթղթավորել բիզնես պահանջները,
- Բիզնեսի պահանջները փոխակերպել տեխնիկական պահանջների, որոնք կիրականացվեն տեխնիկական թիմերի կողմից,
- Ձևավորել user-story-ներ և ստեղծել պրոդուկտի backlog,
- Փոխանցել պրոդուկտի backlog-ի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ողջ թիմին,
- Արդյունավետ աշխատել թիմերի հետ, օգնել հասկանալու աշխատանքի շրջանակը և պատասխանել հարցերին,
- Աջակցել թվային պրոդուկտների կառավարման թիմին սահմանել բիզնես նախագծերի առաջնահերթություն՝ բիզնեսի կարիքներին համապատասխան,
- Նույնականացնել նախագծի շահառու կողմերին և ապահովել նրանց ներգրավվածությունը պահանջների գործընթացի բոլոր փուլերում,
- Հաջողությամբ ներգրաված լինել միաժամանակ մի քանի նախագծերում,
- Սերտ համագործակցել UI/UX դիզայնի թիմի հետ՝ ստանալու դիզայնի վերջնական տարբերակ,
- Վավերացնել իրագործված նախագիծը/ֆունկցիոնալը՝ համագործակցելով QA թիմի հետ, համոզվելու համար, որ այն համապատասխանում է բիզնես պահանջներին,
- Նախաձեռնել ցանկացած աշխատանք՝ ամբողջությամբ բացահայտելու և հասկանալու առաջադրված խնդրի բովանդակությունը,
- Առաջադրել խնդիրների լուծում՝ բոլոր պատճառահետևանքային կապերը բացահայտելու և ուսումնասիրելու արդյունքում,
- Սերտորեն համագործակցել բիզնես վերլուծաբանների և նախագծի կառավարիչների թիմերի հետ յուրաքանչյուր նախագծի շրջանակում:

ՊԱՀԱՆՁՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն SS համակարգերի, տնտեսագիտության կամ հարակից ոլորտում
- Վերլուծելու և եզրահանգումներ իրականացնելու ունակություն,
- Համակարգերի, օգտատերերի և նրանց խնդիրներն ուսումնասիրելու և բացահայտելու և նոր տեխնոլոգիաներ և հմտություններ սովորելու ցանկություն,
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն,
- Գերազանց հաղորդակցման հմտություններ (բանավոր և գրավոր)՝ տարբեր իրավիճակներում, շահագրգիռ կողմերի հետ՝ տարբեր մակարդակներում,
- Ազատ հաղորդակցման և համագործակցման ունակություն տարբեր ոլորտների մասնագետների հետ՝ ինչպես տեխնիկական (ծրագրավորող, QA և այլն), այնպես էլ ոչ տեխնիկական,
- Ծրագրերի մշակման կենսացիկլի (SDLC) իմացություն,
- Agile մեթոդով աշխատանքային փորձ,
- Նախագծերի կառավարման ծրագրերի (օրինակ՝ Confluence, Jira, Microsoft Azure) կիրառական փորձ,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/109 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով: ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/